բանտի եղին։ Եւ ստոյգ ոչ գիտի պատճառն։ Քանզի ոմանք ասեն, թէ սեղբոսն խափեփայ գիր կալեալ իցէ վասն տեղւոյ հապէշին. և ոմանք զայլ ինչ ասեն՝ վասն այնորիկ է ի բանտի։ Եւ հայոց ազգն յետ մեծի ուրախութեան՝ ունին այժմ զտրտմութիւն վասն տեղւոյն հապէշին։ Եւ մինչ զառաջին յաղթութիւնն արարին հայքն՝ առ ֆռանսէզ էլչին ևս դիմեցին, և նա նոցա ասացեալ է, թէ ես ընդ ձեզ եմ և ոչ յունաց, և թէ ձեզ պիտոյ լինի դրամ՝ ես ձեզ գտանեմ մինչև ցերկու հարիւր քսակ դրամոց. և յետ այսց իրողութեանցս ի հրապարակի ժողովրդեան ասացեալ է պատրիարգն զբարերարութիւն էլչուն, թէ զմեզ սիրէ, և ի մեր կողմանէ է. իսկ մեք մեղաստէր եղաք, մինչ ըմբռնեցիք զոմանս և բերիք մեզ թէ ֆռանկք եղեալք են և մեք յղեցաք զնոսա... և մինն ևս ի նոցունց մեռաւ և արեան տէր եղաք, և այլք նմանք բանք յորմէ արտաբերեցեալք են։ . . . .

Գերյարգելութեան ձերում

Նուաստա[գունեղ ծառայ]
ս. տ. ս [Հ. Պողոս Վարդապետ]

տաճիկքն հոչակեն հաշտիլ ինքեանց
ընդ կարմիր գլխոյն. և ինձ հաւատալի
ոչ երևի։

յամի տեառն 1735
և Դեկ. 5։

[Կ. Պոլիս]

ԿԳ.

Կը հրատարակենք հետևեալ նամակը՝ ինքն իր մէջ նորութիւն մը պարունակելուն համար յանձին Մեծ Սերաստացւոյն։

Գերայարգելոյ Տեառն Տեառն հօր մերում Աբբայի

Ցայտ լիցի զի ի դէկտեմբերի Զ-ին Ա բօղալից և խաւարամած լուր իմն լուայ որ բոլորովին անձամբս յուշաթափեալ անկայ ի գետնի, ծաւալեալ աստեանդ իբրև զխելաթափ, մինչ զի հազիւ յետ ժամ և կիսոյ ջուր սրսկեալ յերեսս իմ խելաբերեցայ որպէս զանասուն իմն. և այնպէս որ նորագոյն հիւանդութենէ ելեալ էի զտկարութիւնս դարձ եկեալ պատեաց զիս, և ոչ գիտեմն զվերջն թէ որպէս դիպելոց է վասն իմ, մինչև տէր տացէ զի լուեալ զառողջութենէ Աբբահօրն մերոյ քաղցրագունեղի, դարձցի սուգ իմ ի յուրախութիւն։ Այսպէս եղև դիպուածքն, զի ի գոայօվայու բարդուղիմէոս վարդապետն ի սիպին հանդիպեալ Ա ճիզվիդ պատրի, ասացեալ լինի իւրն թէ լուայ յումեմէ կարգաւորէ, որ վէնէտիկ եղեալ սուրբ ղազարու վանքին Աբբահայրն առ Աստուած փոխեցեալ է։ Եւ լուեալ զայս ի նմանէ Բարդողիմէոս Վ.ն գրեալ էր աստ եղեալ Մ. Վ.ին Խնկանոսեանին. և նա բերեալ զգիրն ընթերցաւ առաջի իմ. վասն որոյ վերոյգրեալ պատահումն հանդիպեցաւ ինձ. վասն որոյ աստուծոյ սիրոյն և քրիստոսի արեան գնոջն փութասջի[ր] գրել Ա մատգիր թէ այս լուրս արդեօ՞ք որպիսի իցէ, զի բաւական է ինձ ցաւն իմ որ կրեցի, լինի թէ ձեր սուրբ աղօթիւքն մի ինասիցիմ տկարութեամբս։....

Պատրաստական ծառայ
Հ. Մ[անուէլ] Աբեղայ

Ցամի Փրկչին 1735
դեկտեմբերի 8